ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 07-L «11» Նոյեմբեր **2024 թ.**

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» («ՖԻԶԻԿԱ», «ՔԻՄԻԱ», «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ», «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ»՝ ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ) ԱՌԱՐԿԱՅԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշումը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի N 78-Ն հրամանի 7-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերը և 13-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա 9-րդ դասարանի «Բնագիտություն» («ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»՝ սովորողի ընտրությամբ) առարկայի ավարտական քննությունը ուսումնական նախագծի միջոցով անցկացնելու և 9-րդ դասարանում «Գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաների ինտեգրված ավարտական քննության ընթացակարգերը:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3/11/2024

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թ. մարտի 11-ի 07-Լ հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» («ՖԻԶԻԿԱ», «ՔԻՄԻԱ», «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ», «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ»՝ ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ) ԱՌԱՐԿԱՅԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում է Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) 9-րդ դասարանի «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»՝ սովորողի ընտրությամբ) առարկայի ավարտական քննությունը ուսումնական նախագծի միջոցով անցկացման, ստուգման, գնահատման, արդյունքների հրապարակման և բողոքարկման կարգը:

2. Տավուշի մարզի Հաստատությունների 9-րդ դասարանի «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»՝ սովորողի ընտրությամբ) առարկայի ավարտական քննությունը ուսումնական նախագծի միջոցով անցկացնելու համար մարտի 15-ից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծվում է մարզային քննական հանձնաժողով, որի կազմում ներառվում են մեկական ներկայացուցիչ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) (հանձնաժողովի նախագահ), Նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնից, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամից, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունից, Տավուշի մարզի ավագ դպրոցներից (դպրոցների ներկայացուցիչները պետք է լինեն «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաները դասավանդող մասնագետներ):

3. Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ հանձնաժողովի անդամները իրականացնում են նախագծերի պլանների ուսումնասիրությունը, և դրանք նախագծային ուսուցման հայեցակարգով սահմանված ձևին համապատասխան լինելու դեպքում հաստատում են դրանք, որպես ընթերակա ներկա են գտնվում նախագծերի պաշտպանությանը և հետևում սույն ընթացակարգի պահանջների պահպանմանը:

4. Տավուշի մարզի յուրաքանչյուր Հաստատությունում մարտի 10-ից ոչ ուշ հաստատության տնօրենի հրամանով ձևավորվում է քննական հանձնաժողով, որի

կազմում ներառվում են հաստատության տնօրենը (հանձնաժողովի նախագահ), ԲՏՃՄ մեթոդմիավորման նախագահը և «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» դասավանդող ուսուցիչները:

5. «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից մարտի 11-ից ոչ ուշ հրապարակվում է ուսումնական նախագծերի թեմաների ցանկ: Թեմաները պետք է լինեն 7-9–րդ դասարանների ուսումնական ծրագրի բովանդակությանը համապատասխան:

6. Յուրաքանչյուր Հաստատությունում ուսուցիչները, սովորողների հետ քննարկելով, ընտրում են առաջարկվող ցանկից թեմա, կազմում են նախագծի պլան՝ համաձայն Հայեցակարգի և այն ներկայացնում են Հաստատության քննական հանձնաժողովի հաստատմանը՝ թեմաները հրապարակելուց հետո՝ 10 օրացուցային օրվա ընթացքում: Հաստատության քննական հանձնաժողովը ոչ ուշ, քան մարտի վերջին աշխատանքային օրը, հաստատում է նախագծի պլանը և ուղարկում մարզային քննական հանձնաժողովին՝ հաստատման:

7. Մարզային քննական հանձնաժողովը ոչ ուշ, քան ապրիլի 10–ը, հաստատում է նախագծերի պլանները:

8. Հաստատություններում նախագծերի իրականացումն սկսվում է ապրիլի 15–ից:

9. Հաստատություններում նախագծերի պաշտպանությունը կազմակերպվում է մայիսի 27-31–ը: Ելնելով աշակերտների թվից՝ նախագծերի պաշտպանությունը կարող է կազմակերպվել 1-ից ավելի օրերի ընթացքում:

10. Նախագծերի պաշտպանությանը ներկա են գտնվում Հաստատության քննական հանձնաժողովի նախագահը, ԲՏՃՄ մեթոդմիավորման նախագահը, նախագիծն իրականացնող ուսուցիչները: Նախագծի պաշտպանությանը՝ որպես ընթերակա, կարող են մասնակցել մարզային քննական հանձնաժողովի ներկայացուցիչները: Յուրաքանչյուր նախագծի պաշտպանության համար հատկացվում է առավելագույնը 90 րոպե:

11. Նախագիծը գնահատվում է 20-միավորանոց համակարգով, 3 բաղադրիչով՝ համաձայն հայեցակարգի: Նախագիծը գնահատում են նախագծի մասնակից ուսուցիչները, որոնց գնահատականները միջինացվում են, և ձևավորվում է սովորողի վերջնական գնահատականը:

Հաստատության քննական հանձնաժողովը հրապարակում է սովորողների գնահատականը պաշտպանության հաջորդ օրը՝ մինչև ժամը 14:00-ն:

12. Սովորողը նախագծային աշխատանք իրականացնելու ողջ ընթացքում, իր ցանկությամբ, կարող է հրաժարվել այն շարունակելուց: Այս դեպքում նա մասնակցում է

ԳԹԿ-ի կողմից իրականացվող ավարտական քննություններին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի 388-Ն հրամանի 27-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում:

13. Նախագծային աշխատանքի պաշտպանությունից ցածր արդյունք ունենալու դեպքում սովորողն իր ցանկությամբ կարող է մասնակցել ԳԹԿ-ի կողմից իրականացվող ավարտական քննությանը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի 388-Ն հրամանի 27-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված կարգով: Նախագծային աշխատանքի պաշտպանությունից և բնագիտական ընտրված առարկայի քննությունից ստացած առավելագույն միավորը համարվում է վերջնական:

14. Սովորողը գնահատականի հրապարակումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի բողոքարկելու իր գնահատականը մարզային քննական հանձնաժողովին: Մարզային քննական հանձնաժողովն իր որոշումը կայացնում է բողոքարկման պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

15. Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել վերադասության կարգով՝ Նախարարություն կամ դատարան:

16. Մարզային քննական հանձնաժողովը մարզի բոլոր Հաստատություններում նախագծերի պաշտպանությունից հետո 10-րդ աշխատանքային օրը դադարեցնում է իր գործունեությունը:

Հավելված 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թ. մարտի 11-ի 07-Լ հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում են հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) 9-րդ դասարաններում «Գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաների ինտեգրված ավարտական քննության անցկացման գործընթացը, որը ներառում է քննության կազմակերպումը, անցկացումը, ստուգումը, գնահատումը, արդյունքների հրապարակումը և բողոքարկումը:
2. Յուրաքանչյուր տարվա 9-րդ դասարաններում ավարտական քննությունների անցկացման օրերը հաստատվում են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի անհատական իրավական ակտով:
3. Հաստատությունների 9-րդ դասարանի սովորողները «Գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաներից հանձնում են ավարտական քննություն՝ ինտեգրված՝ գրավոր, քննության տևողությունը՝ 150 րոպե:
4. Սովորողի պատասխանը գնահատվում է 20-միավորանոց համակարգով:
5. 9-րդ դասարանների «Գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաների ինտեգրված ավարտական քննությունների գրավոր աշխատանքը համապատասխանում է 7-9-րդ դասարանների առարկայական ծրագրային նյութի բովանդակությանը:
6. 9-րդ դասարաններում «Գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաների ինտեգրված ավարտական քննությունը անցկացվում է հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 30 օրվա ընթացքում:
7. Քննությունից առաջ դասավանդող ուսուցիչները սովորողների համար քննական առարկաներից կազմակերպում են խորհրդատվություններ՝ Հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով.
8. Ինտելեկտի (մտավոր) խնդիրներով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով (ԱՈՒՊ) իրականացված գնահատման հիման վրա:
9. Ավարտական քննությունները կազմակերպվում են հաստատություններում:

10. Ինտեգրված ավարտական քննությունների կազմակերպիչներին, օգնականներին, հերթապահներին նշանակում է Հաստատության տնօրենը: Կազմակերպիչները չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:

12. Քննասենյակում չի թույլատրվում տեղափոխություններ կատարել:

13. Քննությունից առաջ Հաստատության տնօրենը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստանում է քննական գրավորների փաթեթը:

14. Սովորողներին չի թույլատրվում քննասենյակ բերել բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական և այլ ուղեցույց-ձեռնարկներ:

15. Սովորողի՝ քննասենյակում տեղավորվելուց հետո, Հաստատության տնօրենը կամ այլ պատասխանատու անձ քննասենյակ է բերում քննական գրավորների ծրարը: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը ծրարները ցուցադրում է սովորողներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով ծրարների փակ և ամբողջական լինելու հանգամանքի վրա: Ծրարը բացելու համար պատասխանատուն հրավիրում է առաջին նստարանին նստած սովորողներից մեկին: Առաջին շարքում սովորողների բացակայության դեպքում հրավիրվում է սովորող այլ շարքից: Ծրարների բացման մասին նշվում է արձանագրության մեջ:

16. Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը սովորողներին տեղեկացնում է քննասենյակում վարքականոնների պահպանման, ինչպես նաև բողոքարկման տեսակների մասին: Քննասենյակում քննության անցկացման կարգն ընթերցելուց և սովորողներին ցուցումներ տալուց հետո կազմակերպիչները բաժանում են սովորողների թվով ստացված տեքստերը և հարցադրումները՝ շարադրանքի համար նախատեսված ձևաթղթերով: Սովորողը գրավորը ստանալուն պես իրեն տրամադրված տետրի վրա գրում է մարզի, հաստատության անվանումը և/կամ համարը, իր անուն-ազգանունը: Գրավորների թերթիկների վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակին նշում է քննության սկիզբը և ավարտը:

17. Քննասենյակից սովորողը կարող է դուրս գալ միայն քննասենյակի պատասխանատուի թույլտվությամբ և միջանցքի հերթապահի ուղեկցությամբ:

18. Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող գրավորները փոխարինվում են նորով:

19. Քննության ընթացքում սովորողների կողմից առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի Հաստատության տնօրենից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել Նախարարության ներկայացուցիչները:

20. Քննության համար նախատեսված ժամանակի ավարտին սովորողը հանձնում է իր աշխատանքը և ստորագրում իր անվան դիմաց: Եթե սովորողն աշխատանքն ավարտում է սահմանված ժամանակից շուտ, ապա նա գրավորը հանձնում է և ստորագրելով իր անվան դիմաց՝ դուրս գալիս քննասենյակից:

21. Պատասխանատուն քննական աշխատանքները քննության արձանագրության հետ հանձնում է հաստատության տնօրենին: Տնօրենը, ներկայացված քննական աշխատանքները վերահաշվարկելով, լրացնում է քննական կենտրոնում անցկացված քննության վերջնական արձանագրությունը, որտեղ նշվում է քննության մասնակիցների, բացակաների, քննությունից հեռացվածների, որևէ պատճառով քննությունն ընդհատածների թիվը (եթե կան):

22. Քննական գրավոր աշխատանքները մինչև դրանց ստուգման ավարտը պահպանվում են հաստատության տնօրենի մոտ, ապա սահմանված կարգով արխիվացվում:

23. Ինտեգրված քննական գրավորները ստուգվում են հաստատության տնօրենի հրամանով ստեղծված պատմության և գրականության ուսուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից, քննության օրը:

24. Գրավորները ստուգվում են նախապես մշակված գնահատման չափանիշների հիման վրա:

25. Գնահատման չափանիշներին համապատասխան՝ պատմության և գրականության ուսուցիչները առանձին գնահատականներ են նշանակում, որոնք միջինացվում են և որպես մեկ գնահատական անցկացվում քննական արձանագրության մեջ: